ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1579 14.09.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբեր ամսին այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Վայքի ՁՊՎ և արձանագրվել էին մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. ՁՊՎ-ն ընդհանուր գտնվում էր շատ փոշոտ և կեղտոտ վիճակում, այն դեպքում, երբ հերթապահ մասի պետը պնդում էր, որ հավաքարարը ամեն օր մաքրում է ՁՊՎ-ն:
2. ՁՊՎ-ում առկա բրդյա ծածկոցները այնքան հին են, որ օգտագործման ենթակա չեն, որը քայքայվում է փոշու տեսքով և կեղտոտում է թե՛ սպիտակեղենը և թե՛ անկողինը:
3. Բուժսենյակը և քննչական սենյակը գտնվում են ռեժիմային գոտում:
4. Բուժսենյակում բացակայում էր բժշկական սավանը:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՈՒՏՔ № 4267
12 09 2015 թ.

Խախտումներ՝

1. Աշոտ Հայկի Պետրոսյանը կալանավորի կարգավիճակով 13.05.2015թ-ին ժամը 19.00-ին ընդունվել է Վայոց Ձորի ՄՎ Վայքի ՁՊՎ՝ առանց համապատասխան որոշման:

   14.05.2015թ-ին ժամը 11.00-ին ոստիկանության Վայքի բաժնի պետի գրության հիման վրա տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Վարդաշեն>> ՔԿՀ, այն դեպքում, երբ տվյալ անձը ձերբակալվել է քննիչի կողմից և քննիչի միջնորդությամբ կալանավորվել է: Տվյալ դեպքում անհասկանալի է բաժնի կողմից ուղեկցումը կազմկերպելու և գրություն ներկայացնելու փաստը, դա պետք է կատարեր քննիչը:

6169

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

15

Միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ Ա. Պետրոսյանը ձերբակալվել է 10.05.2015թ-ին և ունենալով բազմաթիվ մարմնական վնասվածքներ քննիչի միջնորդությամբ տեղափոխվել է հիվանդանոց և 3 օր գտնվել է այնտեղ: 13.05.2015թ-ին ՀՊՎ ընդունվելուց չի գրանցվել նրա մարմնական վնասվածքները, հրավիրվել է բժիշկ, բայց չեն գրանցվել մարմնական վնասվածքները <<Ձերբակալված ազանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

2. Կամո Աշոտի Խաչատրյանի վերաբերյալ քննչական գործողություններ կատարելու նպատակով ՀՀ քննչական կոմիտեի ՎՀՄ քննչական վարչության ՀԿԳ քննիչներ՝ Հ. Պետրոսյանը և Ա. Ադամյանը հայտ են ներկայացրել ՀՊՎ-ում քննչական գործողություններ կատարելու նպատակով, բայց ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ ձերբակալվածը տեղափոխվել է նրանց աշխատասենյակ: Հերթապահ մասի պետը փորձում էր Դիտորդական խմբին համոզել, որ ՀՊՎ-ի քննչական սենյակը, դա ներկայացված քննիչների աշխատասենյակն է:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Անհրաժեշտության դեպքում կարող ենք տրամադրել ներկայացված փաստերի հիմքերը:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3454 <<13>> 10 2015թ.

Ձեր 14.09.2015թ. թիվ 2621/1579 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված փաստերն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Վայոց Ձորի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. Հաշվետվության առաջին կետով նշված թերությունը վերացվել է, հերթապահ մասի պետին խստորեն հանձնարարվել է այսուհետ պատշաճ հսկողություն իրականացնել ՁՊՎ-ի մաքրման աշխատանքների նկատմամբ:

2. ՁՊՎ-ում առկա բրդյա ծածկոցները հին են, սակայն պիտանի են հետագա օգտագործման համար և խմբի այցելության պահին եղել են մաքուր վիճակում:

3. Համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 107-րդ կետի՝ <<ՁՊՎ-ի համալիրի մեջ մտնում են ձերբակալվածներին արգելանքի տակ պահելու հիմնական (առանձին կամ ոստիկանությանը համատեղ) շենքը, զբոսաբակը և այլ շինություններ>>:

4.Դիտորդների խմբի այցելության պահին ՁՊՎ-ի բժշկական սենյակում առկա է եղել բժշկական սավան, որը փռված է եղել մահճակալին գցված մեկ այլ սպիտակ սավանի տակ և ՁՊՎ-ի վարչակազմի կողմից ցուցադրվել է դիտորդների խմբի անդամներին:

Խախտումներ.

1. Կալանավոր Ա.Պետրոսյանը 13.05.2015թ. ժամը 19.00-ին ընդունվել է ոստիկանության Վայքի բաժնի ՁՊՎ՝ ՀՀ ՔԿ Վայոց Ձորի մարզային քննչական վարչությունից ստացված համապատասխան որոշման հիման վրա, որով բացի տվյալ անձին ՁՊՎ-ում պահելը, քննիչի կողմից հանձնարարվել էր կազմակերպել կալանավորի տեղափոխումը ՀՀ ԱՆ <<Վարդաշեն>> ՔԿՀ, ինչը և իրականացվել է ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության ուղեկցող դասակի միջոցով: Քանի որ <<ՁՊՎ-ում պահվող անձանց գրանցամատյանի>> 6-րդ սյունակում նշվել է, որ կալանավորը ՁՊՎ-է ընդունվել քննիչի գրության և կալանքի որոշման հիման վրա, դա դիտորդների խմբին տեղիք է տվել կասկածելու, որ կալանավորը ՁՊՎ է ընդունվել առանց համապատասխան որոշման:

Ա.Պետրոսյանը ձերբակալվել է 10.05.2015թ. և տեղափոխվել ոստիկանության Վայքի բաժնի ՁՊՎ: Կարճ ժամանակ անց, ավտովթարից ստացված մարմնական վնասվածքներից նրա ինքնազգացողությունը վատացել է և նրան քննիչի միջնորդությամբ տեղափոխել են հիվանդանոց: 13.05.2015թ. Ա.Պետրոսյանը տարվել է ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան, որտեղից կալանավորվելուց հետո տեղափոխվել է ոստիկանության Վայքի բաժնի ՁՊՎ: Քանի որ հիվանդանոցում Ա.Պետրոսյանը ենթարկվել է բժշկական հետազոտման, ուստի ՁՊՎ ընդունվելուց նրա մարմնական վնասվածքները ՁՊՎ վարչակազմի կողմից չեն արձանագրվել <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

2. Ձերբակալված Կ.Խաչատրյանի հետ քննչական գործողություններ իրականացնելու նպատակով 31.07.2015թ. ՀՀ ՔԿ Վայոց Ձորի մարզային քննչական վարչության քննիչները, ներկայացված հայտի համաձայն, մուտք են գործել ոստիկանության Վայքի բաժնի ՁՊՎ: Այդ կապակցությամբ Կ.Խաչատրյանը տեղափոխվել է ՁՊՎ-ի քննչական սենյակ, սակայն <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում գրառվել է <<...Հ.Պողոսյանի և Ա.Ադամյանի աշխատասենյակ՝ քննչական գործողություններ կատարելու համար...>> գրառումը: ՁՊՎ վարչակազմի կողմից կատարվել է սխալ գրառում, Կ.Խաչատրյանը դուրս չի բերվել ՁՊՎ-ից, այլ քննչական գործողություններն իրականացվել են ՁՊՎ-ի քննչական սենյակում: Հարկ ենք համարում նշել, որ ոստիկանության Վայքի բաժնի վարչական շենքում քննչական այլ սենյակներ չկան:

ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 13-րդ կետի պահանջը խախտելու՝ կալանավորված անձի մարմնական վնասվածքները <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում չարձանագրելու և <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանը պատշաճ կերպով չվարելու համար, ոստիկանության Վայքի բաժնի հերթապահ մասի պետը խիստ նախազգուշացվել է:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ